

13325



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Արամ Մեյմարյան

*Handwritten signature*

«04» 12 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 258 - 24

Նախաձեռնող՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ  
ք. Երևան, Կիկյան 16

Գործունեությունը՝

Փամբակ համայնքի Բազում բնակավայրի  
կրթահամալիրի կառուցում  
Լոռու մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 258 - 24  
« 04 » շեկտեմբեր 2024թ.

**Փամբակ համայնքի Բազում բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ՀԳՇՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Փամբակ համայնք, Բազում բնակավայր

**Ներածական մաս.** Համաձայն «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Փամբակ համայնքի Բազում բնակավայրում նախատեսվում է կրթահամալիրի (200 աշակերտի համար միջնակարգ դպրոց և 80 երեխայի համար նախակրթարան) կառուցում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Փամբակի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. հունիսի 11-ի N 28 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականներով գրանցված (կադաստրային ծածկագրերը՝ 06-023-0047-0023) պետական սեփականություն հանդիսացող հողամասում (ընդհանուր՝ 1.2056 հա), որոնց նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

**Նկարագրական մաս.** Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Բազում գյուղի արևելյան եզրամասում: Տարածքն ազատ է շինություններից, բացառություն են կազմում հյուսիսային մասում դեռևս խորհրդային տարիներին իրականացված բետոնե հիմքերը: Գոյություն ունեցող ամենամոտ շինությունը տեղակայված է նախատեսվող կրթահամալիրի շենքից նվազագույնը 17 մ, իսկ զինվորական ստորաբաժանումը՝ մոտ 900 մ հեռավորության վրա:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Բազում գյուղի միջով անցնող Չալաբի գետակի (Փամբակ գետի ձախ վտակ) ձախափնյա բարձրադիր լանջի վրա: Տարածքը փորձաքննվում է անկումը՝ հարավարևելք: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1548.0-1562.0 մ



սահմաններում: Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին կավճի կարբոնատային և ստորին պալեոգենի հրաբխանստվածքային առաջացումները: Գրունտային ջրերը հանդիպել են մի քանի հորատանցքներում՝ 3.3-5.8 մ խորության վրա, ավազակավային, մանրախճային շերտերում՝ հանդիսանալով լանջային ջրեր:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում, որտեղ արագացման առավելագույն մեծությունը կազմում է  $A_{max}=0.5g$  և ունի 9 բալ և ավելի սեյսմակայունություն: Գրունտային ջրերի առկայությամբ պայմանավորված իրականացվելու են կառուցի սեյսմանվտանգությունն ապահովող հիդրոտեխնիկական և հիդրոմեկուսիչ միջոցառումներ: Ուսումնասիրվող տարածքը մտնում է չափավոր տաք կլիմայական գոտու մեջ և ունի մեղմ ու համեմատաբար խոնավ կլիմա:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, բացակայում են:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերես - 12056.52 քմ (100 %),
- շենքի կառուցապատման մակերես - 2170 քմ (18%),
- բացօդյա մարզահրապարակների մակերես - 720 քմ (5.97%),
- արևային կայանի զբաղեցրած տարածքի մակերես - 1013 քմ (8.4%),
- ջերմոցների մակերես - 64 քմ (0.53%),
- կանաչապատման գոտու մակերես - 4350 քմ (36.1%),
- բարեկարգում՝ մայթեր, ճանապարհներ, սալվածքներ, բետոնե սալիկներ, բացօդյա ավտոկայանատեղի - 3345 քմ (27.74%),
- այլ շինությունների (գրուցարաններ, հրդեհամարման ռեզերվուարներ, մաքրման կայան) կառուցապատման ընդհանուր մակերես - 394.52 քմ (3.27%):

Կանաչապատման տարածքի ընդհանուր մակերեսի համար հիմք են հանդիսացել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թ. ապրիլի 9-ի N 103-Ն հրամանով սահմանված ՀՀՇՆ 31-03.01-2014 շինարարական նորմերի 43 և 44-րդ կետերը, համաձայն որոնց՝ կանաչապատման ընդհանուր տարածքի մակերեսը հողատարածքի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ կազմում է  $(4350 + 720) \times 100 / 12056.52 = 42.05 \%$ , որը ներառում է նաև բացօդյա մարզահրապարակների մակերեսը և կրթահամալիրի հարակից տարածքը կանաչապատ է, կան այգիներ:

Համաձայն նախագծային լուծումների՝ դպրոցի շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված՝ երկհարկանի հիմնական դպրոցի, մարզադահլիճի և հանդիսությունի դահլիճի և երկհարկանի մանկապարտեզի մասնաշենքեր: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 նստատեղով, իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա (մարզադահլիճի չափերն են՝ 24.7մ x 18.0 մ): Առաջին հարկում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ, իսկ երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը: Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6 x 20.4 մ չափերով, որն օգտագործվելու է որպես թաքստոց: Հարկերն իրար հետ կապված են աստիճանների միջոցով, տեղադրվելու է հարկերը կապող միջհարկային ամբարձիչ հաշմանդամների համար:

Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսոլային ծավալը արտահայտվում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառուցի կոմպոզիցիոն առանցքը: Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօդյա միջոցառումների համար: Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից



չորս խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ: Երկրորդ հարկում նույն կազմն է միայն վարիչի և բժշկի սենյակի փոխարեն ավելացել է հանդիսությունների սենյակ:

Ճակատի խարսխային մասը նախատեսվում է երեսապատել բազալտե սալերով: Մարգարահի, հանդիսությունների դահլիճների և նախակրթարանի մասնաշենքի մուտքերը շեշտված են ֆիբրոցոնոնտային այլ երանգի սալերով: Տանիքի ծածկույթը մուգ մոխրագույն բիտումային կղմինդրից է: Գլխավոր հատակագծում դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է, նախագծված է ջերմոց, բաց ցանկապատված մարզադաշտ, վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք:

Շենքի տանիքն իրականացված է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Կրթահամալիրն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Ջեռուցումը նախատեսվում է ապահովել նկուղային հարկում տեղակայված կաթսայատնից, որտեղ տեղադրվելու են էլեկտրական կաթսաներ, որոնք ապահովելու են կրթահամալիրի ջեռուցումը էլեկտրական յուղային ռադիատորների միջոցով: Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ջեռուցման ռադիատորներ՝ բացառությամբ սպորտսրահից, որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Նախագծով նախատեսվում է 150 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում նոր կրթահամալիրի տարածքում: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 120 հատ ֆոտովոլտային վահանակներից:

Կրթահամալիրի տարածքում տեղադրվելու է FBR15 կայան՝ 10 մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրերի մաքրման կայան, որը բավարարելու է կրթահամալիրի հզորությանը:

Կրթահամալիրն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսվել են միջոցառումներ՝ շենքի երեսպատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ (թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն):

Շինարարության նորմատիվ ժամկետն ըստ օրացույցային ժամանակացույցի կազմում է 22 ամիս:

Շինարարական մեքենաներից և մեխանիզմներից օգտագործվելու են ավտոինքնաթափ, ավտոամբարձիչ, ավտոբետոնախառնիչ, կոմպրեսոր, հետհար մուրճ, էքսկավատոր և այլն:

Կրթահամալիրի շենքի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր, որոնք ձեռք կբերվեն բացառապես լիցենզավորված մատակարարներից: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է 12056.52 մ<sup>2</sup>, որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը կայանվելու է շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն: Շինարարական տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ:



Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, համաձայն որի ընդհանուր հողային հանույթը կազմում է 5190 մ<sup>3</sup>, որը ներառում է նաև պահեստավորման ենթակա 4443 մ<sup>3</sup> բուսահողի ծավալ: Մնացած 747 մ<sup>3</sup> ծավալն ամբողջությամբ հետլիցք է արվելու:

Կենցաղային չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (մոտ 3 տ) հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ տարածքում բացառելով կենցաղային աղբի կուտակումը և այրումը:

Ընդհանուր շինարարական աղբի ծավալը գնահատվել է մոտ 522 մ<sup>3</sup>, որն իր մեջ ներառում է նաև տարածքում առկա նախկին կիսատ մնացած դպրոցի հիմքերի քանդումից առաջացած շին. աղբը, որի հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Փամբակի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն ժամանակավոր կառույցների տեղադրմամբ՝ ապահովելով շին. հրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները, աշխղկի աշխատասենյակ և այլն:

Ջուրն օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Շինարարության ժամանակ ջրի հիմնական աղբյուր կձառայի համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովվելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (50 մարդ), ինչը կազմում է 636.24 մ<sup>3</sup>: 18882 մ<sup>2</sup> ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 2492.24 մ<sup>3</sup>: Ջրցանի հաշվարկն իրականացվել է ամբողջ տարածքի չափի համար՝ ներառելով շինարարության և քանդման գործընթացները:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման համապատասխան: Տարածքի 4350 քմ նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխան բուսատեսակներով:

Կրթահամալիրի կառուցման համար դիտարկվող տարածքում գոյություն ունեն ընդհանուր 32 դեկորատիվ և մրգատու ծառեր, որից 17 ծառ հատցելու է՝ փոխարենը իրականացնելով լայնամաշտաբ կանաչապատման աշխատանքներ, այդ թվում՝ շուրջ 270 նոր ծառերի տնկարկ (ընտրված ծառերի տեսակային կազմը ներկայացված է Հաշվետվությամբ), սամշիտ, սիզամարգեր և ստեղծվելու է ծաղկանոց (205 քմ):

Կանաչապատման համար հողային աշխատանքների արդյունքում տարածքից հանված և պահեստավորված բուսահողը՝ 4443 մ<sup>3</sup> ծավալով, նախատեսվում է պահեստավորել տարածքից շուրջ 850 մ հեռավորության վրա:



Կանաչապատ տարածքի ոռոգումն իրականացվելու է տարածքի հյուսիս-արևելյան հատվածով անցնող D800մմ տրամագծի պողպատե խողովակից: Սնող ջրագծին ոռոգման համակարգը միանալու է de63 PE 100 խողովակներով:

Տարածքում առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում), միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ: ՀՏՀ-ի կողմից կանոնավոր իրականացվող մոնիթորինգի արդյունքները գրանցվելու են Ծրագրի շրջանակում մշակված մոնիթորինգի ստուգաթերթիկում: Ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում իրականացվելու են փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումներ:

Բնապահպանական միջոցառումների գումարային ուղիղ արժեքը (առանց հարկերի) գնահատվում է մոտ 3 մլն. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Համաձայն Հաշվետվության՝ կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Լոռու մարզպետարանը, Փամբակի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Փամբակ համայնքի Բազում բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են երկու հանրային լսում, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

### Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմնի հետ համաձայնեցված:
3. Ծառահատման, կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել՝ Փամբակի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ ապահովելով Հաշվետվությամբ ամրագրված կանաչապատման լուծումները:
4. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտադրող իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:



5. Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմինին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Փամբակ համայնքի Բազում բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Տերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան